1. ՓՈՒՆՋԸ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ և ԾԱՆՈՒՑԱԿԱՆ ՕՐԵՐԸ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ :

2. Տարեկան բաժնորդագինն է միայն չորս արծաթ մէճիտ կանխիկ վճարելի, թէ՛ մայրաքաղաքին և իւր արուարձանաց և թէ՛ գաւառաց համար :

3. Վեց և երեք ամսոյ համար ալ բաժանորդ կընդունուի :

4. Ցեղական և գաւառական թղթակցութեանց ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ :

5. Հասը մէկ դրչ մէճիտ, և կը գտնուի մանուարապէս Պահչէ դաբու Սուճի Պօղոս ազայի խանութը :

ՓՈՒՆՋ

6. Ծանուցման տողը 3 դրչ է մէկ անգամի համար : Աւելի աժան կըլլայ աւելի անդամներու համար :

7. Խմբագրութեան վերաբերեալ որ և է դիմումներու առ Տնօրէն Տէր Հ. Ս. Ալատճեան, Կ. Պոլիս Պալըք-բազար Նահիյէ խան վերի յարկ թիւ 16 :

ADRESSE

H. S. Aladjadjian

Directeur du Journal Arménien **Pöuntchë**:— 16 Nahié Han. Balouk-Pazar Constantinople.

թիւ 1538 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 1880 ԴԵԿՏԵՄԲԵՐ 31

ԱԶԳԱՅԻՆ

1881

Ժամանակը նոր շրջան մը կսկսի վաղը : Կիսթամբ այժմէն նորհաւորել զայն՝ մեր սիրելի ազգին և մանաւորապէս Փունջի ամենէ Ընթերցողաց, մերձաւորաց և հեռաւորաց, բարի բաղդ և յաջողուած մաղթելով բոլորանուէր :

Պատշաճ կհամարիմք մեզ՝ յետ այսորիկ անմիջապէս հրաւիրել մեր ամեն կարգի և ատիճանի ազգայինքն, ամենայն նախապաշարմունք ու կանխակալ կարծիք մերկանալով՝ դառնալ յանցեալն և շրջաբար նայիլ ի հաշիւ, յորում անչուշտ մեր ազգային՝ ընտանեկան և անհատական կեանց, գործոց ու վարմանց համար ուղղիչ ու հրահանգիչ բաղում դասեր կգտնուին : Անշուշտ չեմք կրնար եզրակացնել, թէ անցեալ տարւոյ ամբողջ շրջանը բոլորովին անվրէպ և անսոդիւտ անցուցինք : Անշուշտ չեմք կրնար պարծիլ, թէ ի՛նչ որ պարտ և արժան էր՝ ըրինք մեր հանրական ու անհատական բարգաւաճման համար : Ամեն լրջախոհ Հայ պիտի տեսնէ թէ անդուլ ու անդադար աշխատիլ պարտիմք մեր նիւթական ու բարոյական յառաջադիմութեան համար, զգուշանալով ամենայն զեղծմունքէ ու չափազանցութիւնէ և սին ու սընոտի վէճերէ ու ցոյցերէ ; ըզգուշանալով դիմակաւորներէ և չհաւատալով ամենայն ոգւոյ : Մեր լրագրութեան անցեալ տարւոյ շրջանին մէջ ալ յաճախ կարդացինք զգուշութեան այս կարեւորագոյն յորդորն, և ահա միևնոյն հագնեցուքիւնն ի բերան կկոխեմք նոր տարւոյ սեմերէն ներս, յուսալով թէ փորձոյ բովերէն անցած՝ արթնցած ու ոգևորուած պիտի աշխատիմք ներկայ տարւոյս մէջ, և հաստատապէս պիտի ուխտեմք գործել քան խօսիլ, յառաջադիմել անխոզ ու անթմբուկ, ինչպէս կընէն յառաջադիմութեան անկեղծ վարիչք ազգերն :

ԻՆԸ ԳՈՐԾ ՅԱՌԱՋ

Երբ 1871 ի՛վերջերը, աղգայինն ժողովն՝ լրագրութիւնն ու հասարակութիւնը Կիլիկիոյ Կաթողիկոսի ընտրութեան ու վաւերացման, և՝ Էջմիածնի ու Պօլսոյ հետ ունենալիք յարաբերութեանց խնդրոյն ղբաղեալ էր, երբ ամենայն Հայոց վեհափառ Հայրապետը կոնդակներով ու հեռագրերով կղպուշայներ Պօլսոյ կեդրոնական վարչութիւնը, և երբ ազգային ժողովոյ մէջ երեսփոխանաց ոմանք վարչական ժողովականաց հետ և լրագրաց մէկ մասն Կիլիկիոյ վիճակին վեցամեայ անօք ու անխնամ վիճակին վրայ լալկան կանանց պէս ողբեր կեղծելով՝ ամենայն ջանք ու ճիգ կթափէին Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութիւնը փութացունելու և վաւերացնելու համար՝ յառաջ քան ղՀայաստանութիւն կարևոր յարաբերութեանց ; մեք դարձեալ երբեմն հրապարակային դրիչ մեր լրագրոյն մէջ և իրրև երեսփոխան յատենի ազգային ժողովոյ կը խնդրէինք չաճապարել, կեղծաւոր ողբոց ու հեծեծանաց չանսալ, և նախ յարաբերութեանց խնդիրն կարդադրել՝ յազգային գործարութեանց վրնասուց ու յուզմանց տեղի չթողլոյ համար . և երբ մեր ու մեզ համամիտ երեսփոխանաց արդարացի դիտողութիւններն խեղդուեցան ըղկանաց ու փարիսեցւոց ձայներուն մէջ, լուացինք մեր ձեռքերն, բողոքեցինք ամենայն զօրութեամբ, և մեր բողոքներն յատկապէս արձանագրել տուինք ազգային ժողովոյ ատենագրութեանց մէջ : Այս ամենը եղան ինը տարի յառաջ . վկայ են ինը տարի յառաջ հրատարակեալ մեր թերթերը, վկայ են ինը տարի յառաջ հրատարակեալ ատենագրութիւնք ազգային ժողովոյ :

Երկանիկ պիտի համարէինք զմեզ, եթէ մեր կարծիքներն ու դիտողութիւնները չտուգուէին, եթէ Կիլիկիոյ կաթողիկոսութեան համար պետք եղած յարաբերութեանց սահմանք դժուած ըլլայ ինչ այս ինը տարուան մէջ, եթէ Կիլիկիոյ վիճակին մէջ յառաջադիմական չարժումն մը տեղի ունենար . բայց դժբաղդաբար ոչինչ միսիթարական տեսնուեցաւ : Ինը տարիէ հետէ մինչև ցարդ յարաբերութեանց խնդիրն կայ, և ներկայ ժամանակիս մէջ՝ յորում առաւել պետք ունիմք ներքին անդորրութեան ու գործունէութեան, այս խնդիրն եւս կած ծանրացած է ազգին վրայ : Այլ ևս միսիակոյս մնացած չէ . Կիլիկիոյ Կաթողիկոսը՝ ինը տարի շարունակ վիճակին այլ և այլ կողմերն անգործ թափառելէն, և իշխանութեան ընդարձակութիւն՝ վաճառք, պատիւ, պատուանշան, մեծագումար ամսականի պահանջելէն, և Պօլսէն իրեն եղած ամենայն ազգօգուտ յանձնարարութիւն չլսելու զարնելէն յետոյ, վերջապէս եղած անձամբ Պօլիս եկած է, և այժմ վիճակային անուանեալ ժողով մը իրր թև ու թիկունք առած իրեն՝ կաթողիկոսական իշխանութեան ընդարձակումն կը պահանջէ, ոսկեզօծելով սակայն այս պահանջումն՝ Սսոյ վանքին վերաշինութեան, միաբանութեան մը հաստատութեան, վարժարանի մը հիմնարկութեան խընդիրներով, որոց կարդադրութեան մինչև ցարդ ձեռնարկած և Պօլսէն և այլ ուստեք օժանդակութիւն խնդրած ըլլալու էր :

Եթէ ազատ ու համարձակ խօսիլ ներելի է, այս է Կիլիկիոյ Կաթողիկոսին ընթացքը . առոր վրայ ինը տարիէ հետէ անդադար գրած և ձանձրացուցած եմք մեր ընթերցողները : Ո՛ւր են այժմ, որոնք ինը տարի յառաջ ողբեր կյօրինէին Կիլիկիոյ ժողովրդեան վիճակին վրայ, և կաճապարէին Տ. Մկրտիչ Եպիսկոպոսը կաթողիկոս ընտրել իրր յօգուտ և ի խնամս ժողովրդեան, առանց յայլ և յայնկակ հայելու և միանգամայն առաքինութեամբ կոխտալով ամենայն արգելութիւն ու իրաւունք : Կիլիկիոյ ժողովրդեան յետինը չար եղաւ քան զառաջինն :

Ինը տարի յառաջ կպահանջէինք չեչափ չաճապարել Կիլիկիոյ Կաթողիկոսի ընտրութեան ու վաւերացման համար . իսկ այժմ կպահանջեմք, որ կեդրոնական վարչութիւնը՝ առանց այլ ևս տատանելու՝ վճռաբար ըսէ Կիլիկիոյ Կաթողիկոսին . —«Ազգն համայն չկրնար «դովել ձեր մինչև ցարդ ցուցած «անգործութիւնն ; անտարբերութիւնն ու փառասիրականձգտումն «ներին. պատուանշան կուզէք՝ բայց «Օգոստափառ Սուլթանին չնորհն «է այդ, ղոր կուտայ ում կամի. «խնդրեցինք չաճախ ձեզի համար ; սակայն չընորհեց. 3000 «դրչ ամսական կուզէք կայսերական «կան կառավարութենէն, բայց «այդ բնաւ մէկ կաթողիկոսի «տրուած չէ և կիսրևի չէ խընդրել. Կիլիկիոյ վիճակի սահմանն ընդարձակել կպահանջէք՝ «բայց սակայն հնարին չէ այդ : «պարտիք ընդունիլ Ս. Էջմիածնի Աթոռն իբրև բուն և հա«րազատ աթոռ Հայրապետութեան ամենայն հայոց, ինչպես «Ազգն համայն կընդունի և ընդունիլ պարտի. հաճեցէք դառնալ ձեր կաթողիկոսական աթոռը՝ ուխտելով որ սրտի մտօք «աշխատիք Կիլիկիոյ հարիւր հազարաւոր ժողովրդեան նիւթական ու բարոյական զարգացման համար ; որ դժբաղդաբար ձեր օրով ինը տարուան մէջ առաւել ևս յետադիմեց. իրաւունք և արտօնութիւն կբարուի ձեզ՝ Կիլիկիոյ վիճակի վանօրէից վերին աեսչութիւնն ընել, Կիլիկիոյ վիճակի վանահարց ու առաջնորդաց ընտրութիւնն քան սահմանադրութեան կատարել առաջ, և Պօլսոյ Պատրիարքարանի միջոցաւ նոցա հաստատութեան հրովարտակներն առնուլ ու յանձնել. չնորհ ըսէք երթալ վերաշինել վանքն ու աթոռը, վարժարան բանալ, միաբանութիւն հաստատել, և վտահ ըլլալ թէ ազգը պատրաստ է օժանդակել ատտարել ձեր առաջին ազգօգուտ ձեռնարկութեանց, և վտահ ըլլալ թէ ո՛չ այլազունակ վէճերը, ո՛չ այլ ևս ձև գլխարկ և ո՛չ այլ այսպիսիք բնաւ վառք ու պատիւ չեն բերեր ձեզ. վասն դի պարտքս

«Թևան մէջ է ամենայն վեհմի-
«թիւն, վասն զի ժողովրդասի-
«րութեամբ կփառաւորի որևէ
«իշխանաւոր, և մեծ է ճոխ է
«բարձր է այն՝ որ բարերարու-
«թեամբ ինքն յանկուցած է ժո-
«ղովրդեան սէրն ու սիրտը. կը
«խնդրեմք, փութացէք գառնալ
«ի Կիլիկիա՝ այսու ուխտիս, ա-
«ռաջադրութեամբ ու տրամա-
«դրութեամբք. ապա թէ ոչ՝ թո-
«ղուածէք ձեր ոտից փոշին և
«մեկնուացէք. ազգը չկրնայ
«այլևս չէ թէ ինքը տարի այլ ի-
«նը ժամ սպասել և տակաւին
«լսել չարաչար պահանջմունք»:

Ահաւասիկ, կեդրոնական վարչութիւնն քան մեզ այսպէս և անյապաղ խօսիլ պզտտի, եթէ կուզէ պատասխանատուութենէն զերծ մնալ, եթէ կզգայ յոգնաթիւ ժողովրդեան մը վրայ:

Դու քանի մ'օր յառաջ մեր ձեռքն անցաւ Առանայէն նոյն. 16 թուով առ մեզ ուղղալ նամակ մը՝ յորմէ հետագայ տեղեկութիւնները կը քաղեմք:

«Ցաւօք սրտի լսեցինք, թէ Սսոյ ժողովուրդը մեծ խռովու-
«թիւն հաներ է՝ Ս. Լուսաւորչայ Աչն Աթոռէն դուրս հանել ուղ-
«ուելուն համար. եթէ դիմա-
«դրութիւն լինի՝ մինչև իսկ արիւն պիտի թաւին եղեր. վասն որոյ ժողովրդեան կամաց թողուեր է:

«Կիլիկիոյ Աւետ. Ս. Կաթո-
«ղիկոսն, ամենայն Հայոց, մեծ հան-
«դիսիւ եպիսկոպոսական աստի-
«ճան տուաւ Առանայի առաջնոր-
«դական տեղապահ գեր. Տ. Սահ-
«ուանոս Ծ. վարդապետի Ռսկե-
«րիչեան, և Սսոյ վանուց վանա-
«հայր գեր. Տ. Յովհաննէս վար-
«դապետի Բէքմէզեան, առաջինը
«Մելքայել, և երկրորդը Նիրակոս
«անուանելով յանուն հանդուց-
«եալ կաթուղիկոսաց Կիլիկիոյ:
«Այս հանդիսին ներկայ էին բազ-
«մախուռն ազգայինք և օտարազ-
«գի:

«Կիլիկիոյ Ա. Կաթողիկոսն այս անգամ Առանա հանդիսա-
«լուն, տեղւոյն ժողովուրդն խիստ անվայել կերպիւ վարուեցաւ. ոչ ոք գնաց զովը և ծախուց համար ոչինչ վճարեցին:

«Տեղւոյս ազգային վարժա-
«րանը Պօլսոյ Միացեալ ընկերու-
«թեան խնամոց յանձնուեցաւ՝ ա-
«ռաջնորդական տեղապահ Ա. Հօր
«չանիւք. սակայն դեռեւ ամեն
«աստիճանէ ազգայինք չեն յօժա-
«րիր վճարել իւրեանց պարտքը
«այլ և այլ պատճառանօք. դեռ
«ոչ վարժապետ և ոչ վարժուհի
«կեհաւ: Առանայի ժողովուրդը
«առաջնորդարանին համար պէտք
«էղած ծախքն ալ չընէր. անվնաս-

Թողած են առաջնորդական տե-
ղապահ Ս. Հայրն՝ որոյ աչխա-
տութիւնք և արդիւնք բազում
են Առանայի վիճակին համար.
բայց յայլոց՝ 100 հազար դրուշի
չափ կորուստով դումար մը և-
րևան հանեց, կալուածները միա-
յոյց՝ աճուրդի դնելով, և վար-
ժարանաց համար Միացեալ ըն-
կերութեան հետ եռամեայ պայ-
մանագրութիւն հաստատեց:»

—Եէտիդուլէի Հիւանդանո-
ցին վրայ մեզ տրուած տեղեկու-
թիւնք գոհացուցիչ չեն: Ազգա-
յինք պարտին իւրեանց գթու-
թիւն նուէրներն աւելցնել իւրա-
րեկեցութիւն պատասպարելոյ:
Այս առթիւ դարձեալ կըսեմք,
թէ մինչեռաւոր ազգի մը միակ
Հիւանդանոցն եթէ անպոր ու
բարեկեցիկ վիճակի մէջ չգըտ-
նուի՝ նոյն ազգին վրայ լաւ գա-
ղափար ունենալ կարելի չըլլար:
Մեք զմեզ պիտի հոգամք: Հա-
յկին և մնին յարգումնաւոր դադա-
րումն՝ Հիւանդանոցի մատակա-
բարութեան գործը տարապայման
ծանրացուցած է: Զարմանօք լը-
սեցինք, թէ նոր տարւոյ օրա-
յուցէն՝ որ ի նպաստ Հիւանդա-
նոցի տրուած է միայն 40 հա-
զար օրինակ, ՝ դեռ հազիւ 20
հազար օրինակ վաճառուած է:
Մեր ազնիւ ընթերցողք անչուշտ
բարեհաճեցան կարդալ՝ մեր նա-
խորդ թերթին մէջ՝ թէ ի Լոնտոն
Ծննդեան ուրախ օրը պատկերա-
զարդ թերթէ մը 1 միլիոն 800
հազար հատ ծախուեր է, մինչ-
դեռ և ո՛չ մէկ բարեպաշտական
հաստատութեան մը ի նպաստ
տպագրեալ էր այն: Ցաւելով
պարտիմք խոստովանիլ, թէ կա-
րի չոյժ ետ մնացած եմք. պէտք
է մեր ջանքերն աւելցունեմք՝ մեր
պարտքերն անթերի կատարելու
համար:

—Ընթաստիոյ Գեր. առաջ-
նորդը ուրբաթ մայրաքաղաքս
կսպասուի:

—Էսկիշէհիրի ազգային ժողովն
հետզհետէ հեռագրեր կթափին
ի Պատրիարքարան, որով կխընդ-
րեն իրենց առաջնորդ կարդնել
Պիլէճիկի Գեր. առաջնորդն, և
անկէց զատ ուրիշ առաջնորդ չեն
ճանչնար:

—Զաբլամպայի վիճակն առ
ժամանակայ կնրպիւ Ցրապիզո-
նի հետ միացաւ, և Ցրապիզոնի
Գեր. առաջնորդին յանձնուեցաւ՝
որ իւր պատշաճ տեսած տեղը
վերանորգ կարգէ Զաբլամպայի
նախորդ առաջնորդական տեղա-
պահ Յարութիւն եպիսկոպոսը:

—Պատրիարքարանը Ծրագիր
մը խմբագրելու վրայ է՝ առաջ-
նորդական վիճակաց բարեկար-
գութեան համար: Մեծ պէտք
ունինք այս բարեկարգութեան:

—Երկու շաբաթ յառաջ լը-
րագրոյս մէջ: «Ձեր ընթերցող-
ներէն մին» ստորագրութեամբ
հրատարակեալ նամակի մը ի
պատասխանի՝ մեծապատիւ տո-
քթորն իշմանեան էգիտտիի կոչմա-
նէ նամակ մը ստացանք, զոր
պիտի հրատարակեմք առաջիկայ
թերթով:

Փարիզի Հայկազեան Ուսումնասիրաց Ընկերութեան կանոնադրին ծանօթութիւն: (Տե՛ս էջ 1537)

Ը.

Ներկայացուցիչք

54. Ընկերութիւնը ամեն հայաբնակ մեծ քաղաքաց մէջ իւր ներկայացուցիչներն ունի, առ որս պէտք է դիմեն նոյն քաղաքի ընկերները՝ իրենց բաժինը վճարելու, անդորրագրերն ստանալու և առաջարկութիւնները ներկայացնելու համար:

55. Կեդրոնական ժողովը՝ դիւանի կողմանէ պատրաստուած ընտրելեաց եռապատիկ ա պզբագրելի ցանկի մը մէջէն կընտրէ իւր ներկայացուցիչները, որոց թիւն առ նուազն երկուք է մեկնոյն քաղաքի համար,

56. Ներկայացուցիչք՝ իրենց ընտրութիւնն ընդունած օրէն կեդրոնական ժողովոյ անդամ են, նորա գործառնութեանց, իրա-
նոյ և պարտուց կը մասնակցին, և պարտին բան հաճոյիկ 8րդ համ 15–16 և 17րդ յօդուածոց մէջն տրամադրած ընկերակցութեան պարտքերը կատարել:

57. Ներկայացուցիչք իրա-
ւունք ունին իրենց գործառնութեան դիւրութեանն համար չըրջակայ քաղաքաց մէջ ազգասիրատար գործոց օժանդակ-գործ ծախատարներ ունենալու, որոց համար ներկայացուցիչք պատասխանատու են: Օժանդակ գործ ծախատարք պարտին նոյնպես ընկերք գրուիլ իրենց ընկերութիւնն ընդունած ժամանակ, և իրենց հրահանգներն ու տեղեկութիւնները ներկայացուցիչներուն տալ և նոցա հետ թղթակցիլ:

58. Ներկայացուցիչք՝ ընկերակցութեան առաջարկութիւն մ'ընդունելէ և հաստատութիւն տալէ վերջը, պարտին նոյն ընկերոջ յաւակութեանց և պայմանագրաւն վրայ համաձայ և ճշգրիտ տեղեկագրով մը կեդրոնական ժողովոյ դիւանին վաւերացմանը ներկայացնել:

59. Ներկայացուցիչք պարտէն ընկերակայ ամենավճարքէն և մնանաւորաց նուէրներէն դրամ գանձեալ ոսկիները կամ ընկերութեան դրամատան նոյն քաղաքի ճիւղին յանձնել միւտապէս, և կամ եթէ ոչ ճիւղ, ապա ամեն երեք ամիսն ուղղակի կեդրոնական ժողովոյ դիւանին յղել, եթէ նոյն քաղաքի մէջ դրամատուն մը չէ նշանակուած. սակայն եթէ այս միջոցին մէջ հաւաքուած դումարը հարիւր ֆրանքն անցնի, անմիջապէս պահով դրամատան մը մէջ ի չուածելու են, որպէս զի եղած չհովը փոխադրութեան ծախսերը վճարուելով, մնայր–գումարին ճշտութիւն մը չը հանի:

60. Ներկայացուցիչք բարոյապէս պատասխանատու են իրենց գիտողութիւններէն, քաղաքներէն և ընկերայց գիտողութիւններէն ու առաջարկութիւններէն անյապաղ կեդրոնական ժողովոյ դիւանին յղելու, որպէս զի ընկերութեան գործառնութեանը ճիւտս մը չպատահի:

Թ.

Ճիւղ և ճիւղերու հաստատութիւն

61. Եթէ որ և է քաղաքի ընկերայ թիւը բաց ի ներկայացուցչայ առնուազն յիսունի հասնի, ընկերութեան մէկ ճիւղը կը հաստատուի. այնատեն սոյն ճիւղը կազմել յիսուն ընկերք իրաւունք կատանան կեդրոնական ժողովոյ ներկայացուցչայ թուոյն հաւասար թուով ներկայացուցիչներ ընտրելու ըստ 21րդ յօդուածոյ:

62. Ճիւղերու հաստատութիւնք կեդրոնական ժողովոյ և ճիւղերու ներկայացուցիչներն կը քաղկանան, ներկայացուցչայ իրաւանց և պարտուց կը մասնակցին, և իրենց գործառնութեան պաշտօնները իրենց մէջ կը բաշխեն քուէարկութեամբ:

Ժ.

Հասոյն և ծախսք

63. Ընկերութիւնը՝ ընկերայ ամենավճարքէն և մնանաւորաց նուէրներէն զատ մնանաւոր հասութիւն մը ևս կրնայ ունենալ կեդրոնական ժողովոյ որոշմամբ:

64. Ընկերութիւնը՝ իւր ամբողջ հասութիւն հարիւրին յիսունը իրը պահեստի դրամագլուխ կը պահէ իւր դրամատան մէջ յանուն և ի հաշիւ ընկերութեան. և եւրոպական տերութեանց ապահով արժէքագիրց վերածելով, զորս ոչ ոք առնելու իրաւունք ունի, և ծնացեալ յիսունը պատրաստ դրամ պահելով նոյն դրամատան մէջ, բաց չահուքն հանդերձ իւր նպատակին և կարևոր ծախուց կդործածէ:

65. Ընկերութիւնը իւր որոշեալ ամեն պէտքերը հոգալու պատրաստութիւն ըլլալով՝ իւր

69. Ընկերական ասուլիս

Ամսաթիվ 25 Մարտի 1881 թ.

Ներկա էին՝ Ա. Ա. Ա.

—Կոլոսէն առ Մէսինեցը դեկտ. 17 թուով դրուած նամակ մը կխմացուի, թէ ըստ ոմանց 25 և ըստ այլոց 40 հոգիէ բաղկացեալ ուազակաց խումբ մը Բէլիճնի 6 հարիւրի չափ տուն պարունակող Զաիօրա անուն մեծ գիւղը մտնելով բազում կարկանդակ գնեը, և մանչ տղոց վարժարանն երթալով ուսուցիչն ու բոլոր ուսանողները առեր լեռը հաներ էն։ Աւազակք տղոց ցուցին աչքն անցունելով հարուստ մարդոց ինը զաւակներն ընտրեր, կարկանդակներն ամենուն ալ կերցուցեր, և ապա մէյն մէյն պատհելով միւսները ճանքեր էն, նոցա հատ հատ հանդերձները հնացեալ ընկեր հագցունելով։ Կէն մը ուազակներէն վիրաւորուեր է՝ նոցա դարոց մնած ժամանակ պօռալուն համար։ Ընկերն ր[illegible] պահ մ'ե[illegible]

Ա Զ Դ

Փունջի հետ բաժանորդագրութենէ հաշիւ ունեցող Մեծ. անձերէն կխնդրուի, որ բարեհաճին վճարել անյապաղ։

Ա Զ Դ

Առ Պ. Պօղոս Տ. Գարբիելեան ի Տիգրանակերտ։ — Շնորհ ընէք ղրկել Ձեր հաշիւն։ Գիտէք թէ ո՞րչափ էր և ո՞րչափ զկշէցինք։ Պահած եմք Ձեր բոլոր դրերը։

ԵԼՏԻ ՏԻԼՊԻՐԼԻՐ

Ա[illegible]
անգա[illegible]
հ[illegible]

Սոյն գործը՝ որ Թիւս գաղղիացւոյն գրչին արդիւնքն է, թարգմանած է Եղիազար Էֆէնտի Մուրատեան։ Գինն է 6 ղբուշ, և կծախուի բոլոր գրավաճառաց քով և մանաւորապէս Ղալաթիա 6. Արշակ Էֆէնտիի վաճառատունը։

Կ. ՀԱՋԱՐԵԱՆ

Գործարան Մխախոտի

Մխախոտի հանրածանօթ վաճառականներէն Հազարեան Կարապետ Էֆէնտի՝ որ երկար ժամանակէ հետէ Եւրոպիոյ հետ ծխախոտի վաճառականութեան յարաբերութիւն ունենալով մեծ հմտութիւն ու փորձութիւն ըստացած է, իւր արտադրութեան ներքեւ առած է այս անգամ երեքն ալ «Գանտիլլի» անուանեալ գործարանը։ Ազդէն յայտնի է, թէ Հազարեան Էֆէնտի յատուկ գործակալներ ունի Եէնիճէ, Ցըբրամա, Գավալա, Սամսուն, Պաֆրա և Ցրապիզոն. հետեւաբար ընտրութեան ու [illegible]ժանութեան համար մեծ դիւրութիւններ կընծայէ. ուստի յիշեալ գործարանը դիմող ամեն կարգի յաճախորդք անտարակոյս գոհ պիտի լինին։ Յատուկ յանձնարարութիւնք ալ ճշդիւ կկատարուին ամեն ճաշակի յաճախորդաց համար։ Եւրոպա ղրկուելիք ծխախոտք աղատ են Պանտըրօլի տուրքէ։

Գործարանն է Պօլիս Մ[illegible]
չարշըի անկիւնը Քէթէնճիլէր-պաշը, Եամրաքճի խան՝ թիւ 106։

Գաւաֆեան գրաւաճառատան գներն կգտնուին հետեւեալ խոհան աժան գրեանք

	Գրշ.
Գերեզման Լեւոն վերջին [illegible]	5
Ծիլ Պլաս	15
Պոնէա միլիոնատէր Ա. Բ. Գ.	15
Հաչակաւոր Պորճիայք	10
Տաղք Հնքիմեանի	7
» Դուբոսքի	10
Ընթերցասիրութիւն Զօրաւոր	8
Խաղիւղի քնաշրջիկը	6
Հատ[illegible]	—
Բազմ[illegible]	
Տիեզերական ժողով	2
Եէմէք Թերթիպի	1
Սուտ լուսաւորչականք	1
Բարի Լրիվուն Պարան Բանթալեն	1
Սահմանադրական ճչմարտութ.	1
Նուէր հոգեւոր	1
Դաշակութիւնք օրոց	1
Պետիկին դրքոյկը	1–50
Ծաղկեփոկան մատենադարան	1
Մարիամ Ըօզա	1
Քաւուր կոմս	1
Հրահանգ չերամատած.	1
Բարի Ֆրիտոլէնը	1
Հրահանգիչ վիպէր	1
Բարեպաշտ Մարիամ	— 50
Խոճկորակք	1
Գատմ. Հայոց և Աչխարհագր.	— 50
Ազգային հանգանակութիւն	1
Հարատութ. ճանրան Ֆռանքլինի	1
Բարոյական սկզբունք	— 50
Գաղտնիք կանանց	1
» կղնրականութեան	1
Սխախոտին և ընչաւէտին ազդեցութիւնը	
Գաւառցին իմիտ պատկանիլ	— 50
Քաւուր խանի պօրտալին վիճակ	— 50
Թարիխի միւխթէսար	— 50
Արաց դեղեցիկ	— 50
Գիտգրութիւն	— 50

Նորայրի Գաղղիարէն–Հայերէն բառարանին 31դ թերթին ևս հրատարակեցաւ։ Գլխաւոր վաճառատեղին է Ֆրէնկեան դրատունը, Ուզուն չարչը թիւ 362. կգտնուի նաև ամեն Հայ գրավաճառաց քով, Արշակ Էֆէնտիի թղթավաճառանոցն ի Ղալաթիա, և վայրի քով ի մեծ հրաշտն Բերայի։ Իւրաքանչիւր թերթի գինն է 60 փող արծաթ։

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏՈՒԹ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի և պէրքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է ասոր դեղատոմսը. ամեն չգային տկարութեան ուժգին վարմեան և տխրութեան համար, կ[illegible] և անհատի կրնէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Արդ և եղիսմանց վրայ օգտակար պղպեղ[illegible] մ'ունի, արիւնը մաքրելով նոցա խանդարե՛ալ վիճակը կը կանոնաւորէ, և դրդռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ աղդեցութեամբ արտաքոյ նեմութեան, կուծուցութեան, մաղձային հիւանդութիւններ, որոնցմէ մէկ լաւած կայեր, դէմի ցաւեր կը վանէ, մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը հաքրուելով բոլոր այն ազտեա[illegible] թիւններէ որ չատ անգամ գանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կլլան, առոյգ, ուժեղ և բնական դիրքը կը պահու։

ONGUENT HOLLOWAY.

ՍՊԻՂԱՆԻ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Մարմային հիւանդութիւնք և ք բուժելու մասին ունեցած պալմանական յատկութեանցը չհաւատարիր նաև ուրիշ դեղ մը. հին կամ նոր հանգաւոր վէրքեր, ուռկեք, քաղցկեղ (շէնճէնէ), սրունկի և սեանց վէրքեր կամ բոլորովին կանոյնին և կամ կը լաւանան. օգտակար է նաև հալածուխ, հազի սրտի բարախտան, մաշանդ օդասյաւ (եէլ) ըռաւած հիւանդութիւնն։ Իւր կազդուրիչ, և զօրաւոր աղդեցութեամբը թոյլ (օըրգա) հիւանդութեան ապաքինիչ զօրութիւնը լինչ աստիճան որ ըլլայ կըգործադրուի։

Այս դեղերուն գործածութեան ձանձնակը նչանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մանաւորապէս գլխ գահէչ–գաբաւ թաչ խանի մոտիրը Պ. Գաւաթարեանի դեղարանը Ն. 7 կծածուի։

Աւելի տանելի հոդողը կը հրատիր առ հեղինակն տօքթ օր Հալլոուէ Լէմտըն Օքսֆօրտ փողոց թիւ 533։

ԴՐԱՄԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

27 Դեկտեմբեր 1880

Ֆռանսիոյ	13—34
Երկաթուղայ	Ֆրն. 38—50
Թրանուէյ	Օ. Լ. 3—85
1863 ի վախառութիւն	Ֆրն. 60—
1865 ի »	» 70—
1869 ի »	» 69—
1872 ի »	» 22—25

Օսմանեան լիրան 100 դրչ.

Մէճիտիէ	107—27
Մէճիտիք	209—20
Հինգնոց	210—20
Վեցնոց	129—25
Գինձ	750—
Թումարրամ	1240—
Բաւսիոյ Ռօլ	90—18
Գաղղիական լիրա	87—20
Անգղիական »	110—7
Գրմոյ	51—23

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
Ս. Հ. ԱԼԱՖԱՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԱՑ ԱՇՃԵԱՆ
Ն. ՊՕԼԻՍ ՍԻՒՄՊՈՒԼԻ ԽԱՆ

—ձեզարէթի տայիւնաէ վէ էաքի թաղ- դաւուսը ճիհէթինաէ քէլէ միւճէուատէաէն ինչա օլունան մա մանթալա պիրի ա- վամ վէ պիրի խաւաաէ մախսուս օլարաղ միւքէմմէլ վէ միւնթա- զամ լիքի տայիրէտէն խպարէթ պիր լօղանթա էլէ պիր դրա- աթխանէ վէ ալթը պաղ տախի տիւքեանը միւչթէմիլ էմնիյէնէն չէրսյիթի մնչիւմ էլէ զուհուր խոէճէք թալիպինէ իճար օլնա- ը մուգաբրեր օլաըրլնան՝ պունէրլին խթիճարինէ թալիպ օլանէրլին հաճիատա եւչ կինն եանի ճիւմաա խթիէի վէ վա- դար վէ փէնչէնպէհ կիւների սա- աթի պէչանէն եէտիյէ գատար նէղարէթի խթիհգեամ վէ ինչա- աթը տաքերլյէ տայիրէէնէ միւ- բաճաաթի խյէմեերի լուդումը էվվէլճէ իլան օլմընչ ըսը. դրա- հուր իսէն թալէպլէր պէ յինէտ մէղքիւր լօղանթանըն միւզայէ- աէսի պիլ իճրա պու կիւնէրտէ դաւաթը գաթիսի վիրիմէ իւզ- ըէ պուլընարդընան՝ սուրէթը հալ մնչիմ օլմադ վէ մէղքիւր լօղանթա վէ սայիրէի խթիճար արդուգնաա պուլունանէր վար իսէ՝ չու կիւնէրտէ տայիրէի մէղքիւրէյէ միւրաճաաթ խյէ- մէք իւզրէ իլանը քէյֆիյէթէ խաթիատար դըլընաը։ 1–3

25 քեանունի–էվվէլ 1880